



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

## ՈՐՈՇՈՒՄ N° 01Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ 16Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին աստիճանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխություններ և լրացումներ.

ա) Հավելվածի 7-րդ աղյուսակի 1-ին կետի «Դատավոր» սյունակից հանել «Կոստանյան Սուրիկ Գևորգի» բառերը:

բ) Հավելվածի 15-րդ աղյուսակի 3-րդ կետի «Նստավայրի անվանում» սյունակի «Դիլիջան» բառից հետո լրացնել «-Նոյեմբերյան» բառը, իսկ «Դատական տարածք» սյունակի «Դիլիջանի և Նոյեմբերյանի վարչական տարածք» բառերը փոխարինել «Տավուշի մարզի վարչական տարածք» բառերով:

զ) Հավելվածի 15-րդ աղյուսակի 4-րդ կետի «Նստավայրի անվանում» սյունակի «Նոյեմբերյան» բառը փոխարինել «Դիլիջան - Իջևան» բառերով, «Դատական տարածք» սյունակի «Տավուշի մարզի վարչական տարածք» բառերը փոխարինել «Դիլիջանի և Իջևանի վարչական տարածք, սնանկության գործերով՝ Տավուշի մարզի վարչական տարածք» բառերով, իսկ «Մասնագիտացում» սյունակի «Քաղաքացիական» բառից հետո լրացնել «/Սնանկության/» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 19-ից:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

**2015թ. հունվարի 16  
ք.Երևան**